և պայծառ յաղթս և յաղթինս։ Ճոխ եկեղս և աւտարքս, անպարտելի թագաւորս և զաւրքս՝ ի հաւատս և ի հոգիս։ աստուածազան հայրապետս և դեր ի վերս պսակեա փառաւք եկեղեցիս։ Քանզի կանգնեցեր սմա աշտարակ յասպի, և դուռն վանի՝ և պատ յականց պատուականաց, սիւն երկաթի և պարիսպ պղընձի՝ և դու ջահ աստուածավառ ի մէջ սորա։ որ առեր զխլայն՝ և բարձեր զպատրըւակն, վերացուցեր զքողն, լուծեր զոլոռունս պանրացեալ կաթինն։ բարձեր զցնցուղս ստեան դիեալ դիւրաւ փափաքողաւցս անխարդախին, սնուցեր զմանկունս, պարարեցեր զպատանիս, սանձեցեր զերիտասարդս և զաւսարդս։ * զաւրացուցեր զայրս, փափկացուցեր զծերս, սրեցեր զտեսուչս, կատարեցեր զքահանայս, սրբեցեր զսարկաւագս, դրրուատեցեր զդպիրս, կարգեցեր զկլէրս, կեցուցեր զկրաւնաւորս, կերակրեցեր զսրբազանս, լուսաւորեցեր զերախայսն, բժշկեցեր զայսահարսն, ապրեցուցեր զապաշաւողսն, մաքրեցեր զանմաքուրսն, արարեր զայս և առնես միշտ։ Եւ յորժամ զամենայն լցեր կատարեցեր և փարթամացուցեր, հաներ զանարգն և եղեր զարգաւորն՝ լցեր և զսահման թըլոյ աւուրց կենցաղոյս։

---

*. Լուս. «զերիտասարդս»։